



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12  
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ  
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ  
22.11..2023Թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 24 անդամները:  
Բացակայում են ավագանու անդամներ՝ Գարիկ Պալյանը, Գարիկ Ղամբարյանը և Նարեկ Բարայանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Չիլինգարյանը, խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալաբեկյանը, Ա.Ջաբարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար\_Հ. Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.
  - 1) Չարենցավան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
  - 2) Չարենցավան քաղաքի Վուդրո Թոմաս Վիլսոնի անվան փողոցի, հարակից խաղահրապարակի վերանորոգման, 3-րդ թաղամասի լողավազանի և 10-րդ շենքի տարածքը հանգստի գոտի դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին:
  - 3) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

## Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ

Կողմ-24

դեմ - 0

ձեռնպահ - 0

**Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:**

### Լսեցին.

#### 1. Չարենցավան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

*/Ձեկ. Գ.Աֆյան/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի, **առաջարկում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու անդամ Ա.Գալստյանը հետաքրքրվեց, արդյո՞ք ասֆալտապատման աշխատանքները վերաբերվելու են նաև մայթերին:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանը պատասխանեց, որ մայթերը և եզրաքարերը նույնպես նախատեսված է ընդգրկել առաջիկա աշխատանքների ցանկում:

Քննարկվեց նաև համայնքի խաղադաշտերի և մանկապարտեզների սպասվող վերանորոգման աշխատանքները:

Համայնքի ավագանու անդամ Ա.Խեչոյանն էլ հարցրեց՝ Եղիշե Չարենցի հուշասրահի վերանորոգման աշխատանքների մասին, Հ.Շահգալոյանը պատասխանեց, որ հուշասրահի վերանորոգման աշխատանքների նախագծային գործընթացը արդեն սկսված է: